ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
«ՈՒՐՑԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
«УРЦАДЗОРСКАЯ СРЕДНЯЯ
ШКОЛА»
ГНКО

Գ. Ուրծաձոր, Տիգրան Մեծի 30
с. УРЦАДЗОР

«_08_» __12__ 2020թ.

<<ԱՐՄԻՆԱՇՈՂ>> ՍՊԸ-ին՝ Արարատի մարզ, ք. Արարատ, Սուրբ Ամենափրկիչ 28/4
<<ՌՈՒԶ- ՄԱՐՏԻ>> ՍՊԸ-ին՝ Արարատի մարզ, ք. Մասիս, շ.6, բն. 40
Ա/Ձ ԱՇՈՏ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻՆ՝ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Աճառյան փ., տ.6
Ա/Ձ ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ՝ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Հ.Թովմասյան 7/19

Հարգելի գործընկերներ

Հայտնում ենք, որ ՀՀ Արարատի մարզի «Ուրծաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 2020թ. կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «սննդամթերք»: Գնումները ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում « Ուրծաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին 2020թ. համար տրամադրված ֆինանսական միջոցների հաշվին և գնման գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը: Սույն գնման ընթացակարգը հայտարարվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 1-ին ենթակետի՝ Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ԱՄՈՒՀՄԴ-ՄԱ-ԱՊՁԲ -20/2»:

Նշված գնման ընթացակարգին մասնակցելու համար «Ուրծաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ պետք է ներկայացնել Ձեր կողմից հաստատված գրությամբ՝

1) Գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում /ձևը կցվում է/ ,
2) Գնային առաջարկ՝ Ապրանքի ամբողջական նկարագրի հետ միասին / ձևը կցվում է/ ,
3) Գրավոր հայտարարություն /ձևը կցվում է/ , որ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

ա) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,
բ) մասնագիտական փորձառություն,
գ) տեխնիկական միջոցներ,
դ) ֆինանսական միջոցներ
ե) աշխատանքային ռեսուրսներ:

Համաձայնության դեպքում խնդրում ենք դիմումը և գնային առաջարկը ապրանքի ամբողջական նկարագրի հետ միասին՝ մասնակցի հաստատած գրությամբ: Հայտը անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2020թ. դեկտեմբերի 11-ը ժամը 11:00-ն սահմանված կարգով փակ ծրարով ՀՀ, Արարատի մարզ, գ. Ուրծաձոր, Տիգրան Մեծի 30 հասցեով, հաշվապահություն, գնումների համակարգող Լուսինե Բազիկյանին: Հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ քարտուղարին (գնումների համակարգողին) հասցեագրված գրությամբ բնօրինակ փաստաթղթերի արտատպված (սկանավորված) տարբերակը ուղարկելով lusine.bazikyan@bk.ru էլ. Փոստի հասցեով:

Կից Ձեզ է ներկայացվում կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը: Ապրանքների ձեռքբերման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:

«Արարատի մարզի Ուրծաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
Տնօրեն՝ Կ.Մկրտչյան

Digitally signed by
MKRTCHYAN KARINE
6907560151
Date: 2020.12.09 07:47:54

Հասցե՝ Արարատի մարզ, գ.Ուրծաձոր, Տիգրան Մեծի 30
Էլ.փոստ՝ lusine.bazikyan@bk.ru

Կատարող՝ Գնումների համակարգող
Լ.Բազիկյան հեռ. 091-777-037